

ԱՐԱԳ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՀԱԿԱԴՐՈՆԱՅԻՆ ԹԱՔՍՏՈՑ (ԱԿՀԹ)
«Бербер»-КД(с)

Արագ կառուցվող հակադրոնային թաքստոցը քանդովի-հավաքովի ինժեներական կառույց է, որը ծառայում է օբյեկտները անօդաչու թռչող սարքերի (դրոնների) չարտոնված ներթափանցումից և ազդեցությունից պաշտպանելու համար:

Ընդհանուր նկարագիրը

«Бербер» ԱԿՀԹ հավաքածուն նախատեսված է նվազագույն քողարկման և ԱԹՍ-ների նետումներից պաշտպանվելու համար, այդ թվում՝ անտառային բուսականության (բաց դաշտ) բացակայության պայմաններում.

- անհատական խրամատներ,
- խրամատների գծի առանձին հատվածներ,
- բլինդաժների մուտքեր,
- դաշտում խրամատների բացակայությամբ դիրքեր,
- զինամթերքի փոքր պահեստներ,
- ՌԷՊ/ՌԷՀ սարքավորումներով փոքր կետեր:



Մենահատ խրամատի կամ բլիդաժի թաքստոցի ընհանուր տեսքը



Մի քանի թաքստոցների կարկասը (ցանցը ցուցադրված չէ)

Խրամատի գծի երկայնությամբ մի քանի թաքստոցներ

Թաքստոցի լրակազմը հեշտ է պատրաստել, էժան է, կոմպակտ, կշռում է մոտ 5-6 կգ, տեղափոխվում է մեկ անձի կողմից, թույլ է տալիս բոպեների ընթացքում ցանկացած վայրում ԱԹՍ-ներից նվազագույն պաշտպանություն սահմանել:

• Խրամատում գտնվող մարտիկներին պաշտպանում է ԱԹՍ-ներից անմիջապես նետված նռնակներից և նռնականետի բկորային արկից (ВОГ):

• Պաշտպանում է թեթև (մինչև 2 կգ) FPV- կամիկաձե դրոնների հարձակումներից:

• Թույլ է տալիս ցանցի միջով իրականացնել հակառակորդի կամ ԱԹՍ-ների շարունակական դիտարկում:

• Թույլ է տալիս կարկասի վրա ձգված ցանցի միջով ԱԹՍ-ների ուղղությամբ հրաձգային կրակ վարել:

• Դժվարացնում է ԱԹՍ-ներից թաքստոցի ներսում գտնվող մարտիկների գործողությունների դիտարկումը:

• Անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել որպես կեղծ նշանակետ:

• Թաքստոցների վրա լրացուցիչ ջերմային ծածկոցներ օգտագործելիս ապահովում է երկարատև պաշտպանություն ջերմացույցային դիտարկումից:

• Թաքստոցների վրա դիմակ-ցանցերի կիրառումը կարող է օգտագործվել որպես քողարկման միջոցներ:

• Տեղումներից, քամուց և այլ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար թաքստոցների վրայի ցանկացած գործվածք (կամ պոլիէթիլեն) կարող է օգտագործվել որպես սովորական վրան (վրանածածկ):

• Ցանկացած տարածքում ցուրտ եղանակային պայմաններում այն թույլ է տալիս շատ արագ անձնակազմի համար ստեղծել ցրտից և քամուց պաշպանվելու նվազագույն ժամանակավոր ապաստան:

Տեղադրված թաքստոցի բարձրությունը գետնի մակարդակից (հարթ մակերևույթից, կախված կանգնակների երկարությունից, բարձրությունը գագաթում 140-150 սմ) թույլ է տալիս.

- մտնել ու դուս գալ առանց թաքստոցը ապամոնտաժելու:

- Պառկել և նստել ծածկոցի տակ:

- Տեղադրել խրամատի, խրամատների գծի վերին մասում, բլինդաժի մուտքի վերևում կամ դրա դիմաց:

- Տեղադրված ցանցի ծածկոցի տակ իրականացնել հողային աշխատանքներ:

– Լրացուցիչ քողարկում ապահովելու համար ցանցը կարելի է նախապես թավալգլորել ցեխի կամ փոշու մեջ:

- Ձյան ծածկույթի դեպքում ցանցը դառնում է թաքստոցի ձմեռային քողարկման տարբերակ:

Ընդլայնված հակադրոնային կամարաձև թաքստոցի լրակազմը.

1) կանգնակ-ձողիկներ կոմպոզիտային ամրանից՝ 11 հատ,

2) ստորին կանգնակների վռանները միացնելու համար ռետինե սևեռակներ՝ 6 հատ.

3) ՊՆԴ-16 խողովակները կամարին միացնելու ներքին վռաններ՝ 6 հատ,

4) ՊՊ-25 խողովակները կամարին միացնելու արտաքին վռաններ՝ 6 հատ,

5) ցանցը ամրացնելու համար պլաստիկե սեղմակներ՝ 20 հատ,

6) ցանցը ամրացնելու համար 25 սմ հատվածով պարան՝ 16 հատ.

7) 55 գ/մ - 3x4մ մուգ կանաչ ճակատային ցանց,

8) բարձրության գագաթները միացնելու համար մեկուսիչ ժապավեն՝ 1 գլանափաթեթ,

9) 800 գրամանոց զարկիչով մուրճ՝ 1 հատ.

10) 50 սմ մետաղական ամրանից պատրաստված հողային անցքահատ՝ 1 հատ,

11) Պլաստիկե անուր - առձգիչ (хомут-стяжной) 5x200 մմ՝ 20 հատ,

12) Պոլիպրոպիլենային պարան (լրացուցիչ)՝ 20 մետր,

13) կտորե բանվորական ձեռնոցներ՝ 1 զույգ,

14) նկարագրությամբ և գծապատկերներով հրահանգ՝ 1 հատ.

15) Թաքստոցը տեղափոխելու տրանսպորտային պատյան՝ 1 հատ:

Թաքստոցը միանձնյա տեղադրման համար պահանջվում է 15-17 րոպե, իսկ երկուսի դեպքում՝ 8-10 րոպե: Մեկ թաքստոցում կարող են տեղավորվել մինչև 4-5 մարդ:

Տեղադրման կարգը և սխեման

Ընդհանուր սկզբունքը.

– 6 կանգնակները (երկակի վռաններով) խրվում են գետնին, 3-ական կանգնակ 1 թեքատին: Միացնող վռաններում տեղադրվում են ևս 3 կանգնակներ և ստացվում է 3 փակված կամարներ:

- Կարկասի կամարի վերին մասերը հորիզոնական ամրացվում է երկայնքով միացված երկու կանգնակով, ցանցը փռվում է ու ամրացվում վերևում:

Ցուրտ եղանակին ամրանի միացման և հանգույցների ամրացման համար ավելի լավ է օգտագործել մետաղալարեր (մետաղալարերի հատվածները փաթաթված են առձգիչների հետ միասին) առձգիչի փոխարեն:

Ցանցը հարկավոր է լավ ձգել ամրացման ընթացքում:

• Եթե ձողիկները դժվարությամբ են խրվում հողի մեջ կարծրության պատճառով, նախապես օգտագործեք 50 սմ մետաղական ամրանից պատրաստված հողային անցքահատը և լրակազմի մուրճը:

• Մի մխրճեք կոմպոզիտային ամրանները ուղղակիորեն գետնին, կարծր կամ սառած հողի վրա, միշտ օգտագործեք մետաղական անցքահատը:

Հավաքման հաջորդականությունը

ԱՇԽԱՏԵՔ ՁԵՌՆՈՑՆԵՐՈՎ:



Կամարային թաքստոցի կարկասը հավաքված վիճակում

Կարևոր է:

Թաքստոցի մուտքի լայնքը միշտ պետք է լինի 1,5–1,7 անգամ ավելի մեծ, քան թաքստոցի բարձրությունը, այդ դեքում այն ավելի կայուն կլինի քամու ազդեցությանը:

Օգտագործեք կանգնակները որպես չափերիզին փոխարինող: (Թաքստոցի կանգնակների երկարությունը կարող է լինել 135 կամ 150 սմ):

1) Գծանշեք կարկասի 6 ստորին կանգնակների տեղադրման վայրերը:

Մեկ թեքատին տեղադրված 2 հարակից կանգնակների միջև հեռավորությունը 1 կանգնակի երկարությունն է՝ հանած ափի լայնությունը (10 սմ):

150 սմ կանգնակների երկարության դեպքում մենք ստանում ենք.

թաքստոցի ընդհանուր երկարությունը 280 սմ (2 կանգնակ երկարությամբ, մինուս 2 ափի լայնություն),

թաքստոցի ընդհանուր լայնությունը 230 սմ:

Կանգնակների ձևավորված կամարի 2 եզրերի միջև հեռավորությունը կանգնակների մեկուկես երկարությունն է:

Թաքստոցի բարձրությունը հարթ հողի մակարդակից 140-150 սմ է: Խրամատի (խրամուղու) հատակից մինչև գագաթի բարձրությունը 2.2-2.8 մ է:

2) Մետաղական ամրանային անցքահատով և մուրճով ծակեք հողը 20-25 սմ խորությամբ (մոտավորապես անցքահատի երկարության կիսով չափ):

3) Խրեք 6 կանգնակները (ռետինե սևեռակներով վռանները դեպի վեր) մոտ 20-25 սմ խորությամբ:



Ռետինե սևեռակը պետք է լինի յուրաքանչյուր կանգնակի վերին եզրից 15 սմ հեռավորության վրա (տե՛ս սպիտակ նշանը):

Վռանով երկտակ միացված կանգնակ

Վերին կանգնակ

Ստորին կանգնակ սեռակով

4) Տեղադրված 6 ստորին կանգնակների վրա սահեցրեք սև բարակ վռանները ռետինե սեռակների հետ միասին դեպի կանգնակների եզրերը, մինչև ամրանային կանգնակի սպիտակ նշիչը (ընդհանուր առմամբ 6 կանգնակ):

Ռետինե սեռակը հետագայում կպահպանի վռանը սահումից:

Տեղադրեք արտաքին հաստ վռանը բարակ վռանի վրա 2 սպիտակ նշանների միջև:

Երկակի վռանների կոնստրուկցիան հավաքման կամ շահագործման ընթացքում կանխում է դրանց կորուստը:

Հավաքված կամարներից յուրաքանչյուրը բաղկացած է 2 կանգնակներից՝ սեռակներով և վռաններով, և մեկը՝ առանց դրանց:

5) Տեղադրեք, առանց սեռակների 3 կանգնակները ճկելով միացնող վռանների վերին եզրերին, որպեսզի ձևավորվի թաքստոցի կամարի 3 փակ աղեղ (3-ական կանգնակ յուրաքանչյուր կամարում):





Գագաթային մասում 2 կանգնակների միացումը անուր-առձգիչի, մկուսիչ ժապավենի կամ մետաղալարի միջոցով

6) Մեկուսիչ ժապավենի (առձգիչների կամ մետաղալարերի) օգնությամբ միացրեք մնացած 2 կանգնակները երկարությամբ՝ կանգնակները միմյանց վրա եզրաածածկելով մոտ 25-30 սմ (մոտավորապես 2-3 ափի լայնության):

7) Տեղադրեք այդ երկար կանգնակը կամարաձև կարկասի վերին մասում և պինդ ամրացրեք այն կամարների վերին 3 կետերում՝ օգտագործելով մեկուսիչ ժապավենը (առձգիչները կամ մետաղալարերը):

Խրամատների արդեն գոյություն ունեցող գծի վերևում սարքավորելիս ավելի հարմար է տեղադրել 6 ստորին կանգնակները, այնուհետև հարթ մակերևույթին հավաքել վերին կանգնակներն ու գագաթային բարձրության 2 վերադրակները մեկ կառուցվածքի մեջ և միայն դրանից հետո միացնել կանգնակները կողերին:

Այսպիսով, մենք ստանում ենք հավաքված թաքստոցի կարկասը հետևյալ չափերով.

թաքստոցի մակերեսը 230x250 սմ, գագաթային բարձրությունը՝ մոտ 150 սմ:

Թաքստոցը համալրվում է 50% (55 գ/մ) 3x4 մետր չափի ստվերապատված ճակատային ցանցով:



8)Կարկասը ծածկեք 3x4 մետր ցանցով՝ 1 շերտով:

Ցանցի կարճ կողմով ծածկվում է ճակատից դեպի թիկունք, այսինքն գետնից մինչև գագաթային բարձրության յուրաքանչյուր թեքատի համար 2 մետր:

9) Ամուր ձգել ցանցը և պլաստիկ սեղմակներով ամրացրնել կանգնակների ամրանին (յուրաքանչյուր կանգնակին 1-2 հատ):

10) Թաքստոցի գագաթի վերին ձողիկի երկու կողմերում երկու արտաքին աղեղների վրա լրացուցիչ ամրացնել ցանցը պլաստիկ սեղմակներով:

11) Ցանցը պլաստիկ սեղմակով ամրացնել թաքստոցի «մուտքի» և «ելքի» մոտ գտնվող թաքստոցի գագաթի ձողիկին:

12) Լրակազմի պարանների կարճ հատվածները ցանցի միջով փաթաթելով կապել պլաստիկ սեղմակներին՝ ուժեղ քամուց կամ հարվածային ալիքի ազդեցությունից ցանցի կորստից խուսափելու համար: Ամրացման գործընթացում ցանցը պետք է լավ ձգվի:

Ապաստանի հավաքումն ավարտված է:

===*===*===*===*===*===

Թաքստոցը խրամտի վերին մասում տեղադրելիս խորհուրդ է տրվում լրակազմի 20 մ կծիկի պարանից «մուտքի» և «ելքի» մոտ սարքավորել 1 մետր երկարությամբ լրացուցիչ «հակադրոն վարագույր» :

Յուրաքանչյուր արտաքին աղեղի վրա պետք է կապել 10 կտոր պարան միմյանցից հավասար հեռավորության վրա:

Այսպիսի պարզ պաշտպանիչ միջոցառումների կիրառման արդյունավետությունը հաստատվել է փորձարկումների ընթացքում:

===*===*===*===*===*===

- Խորհուրդ է տրվում մեկ օրվա ընթացքում իրականացնել ամբողջ կառույցի վիճակի տեսողական զննում:
- Ջերմացույցների հսկողությունից պաշտպանվելու համար խորհուրդ է տրվում օգտագործել ջերմային ծածկոցներ:

Աղբյուրը. https://vk.com/wall-46943161_1668477?ysclid=m95y3comth151464988